

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՍԱՐԱՆ

ՎԱՍԻԼՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ ԳԱԳԻԿԻ

ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՉՐԱՅՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ. ՀԱՐԿԱՅԻՆ ԱՄՊԵԿՏ

Ը.00.03- «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ»
մասնագիտությամբ տնտեսագիտության բեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

ՄԵՂՍԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2014

Ատենախոսության բեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Վլադիմիր Լիպարիտի Հարությունյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Աշոտ Աղասու Թավադյան

տնտեսագիտության թեկնածու
Վահան Համլետի Ավետիսյան

Առաջատար կազմակերպություն՝

Հայ-Ռուսական (Մլավոնական) համալսարան

Ատենախոսության հրավարակային պաշտպանությունը կայանալու է 2013թ-ի
դեկտեմբերի 19-ին, ժամը 15³⁰-ին Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարանում գործող ՀՀ ԲՌՀ-ի տնտեսագիտության թիվ 014 մասնագիտական
խորհրդում:

Հասցեն՝ 0025, ք. Երևան, Նալբանդյան 128

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական
տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013թ.-ի նոյեմբերի 18-ին:

014 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝



· Ա.Լ. Ասլանյան

Հետազոտության թեմայի արդիականությունը: Շուկայական տնտեսության կայացումից ի վեր դրանում տեղ են գտնում տարաբնույթ ճգնաժամային երևույթներ, որոնք բացասական ազդեցություններ են ունենում տնտեսական հարաբերությունների բնականոն ընթացքի և այդ հարաբերությունների մասնակիցների վրա: Գնաժամները միշտ գտնվել և ներկայումս էլ գտնվում են տարբեր տնտեսագետների ուշադրության կենտրոնում: Չնայած գոյություն ունեն տարակարծություններ ճգնաժամերի առաջացման պատճառների և դրանց հաղթահարմանն ուղղված հակաճգնաժամային միջոցառումների ուղղությունների վերաբերյալ, մեկ բան ակնհայտ է. ճգնաժամերն անխուսափելի են և միայն լուրջ հակաճգնաժամային քաղաքականության միջոցով հնարավոր կլինի մեղմել դրանց ազդեցությունը և հնարավորինս շուտ դուրս գալ ճգնաժամային փուլից:

Ժամանակակից ճգնաժամերի կարևոր առանձնահատկություններից մեկն այն է, որ ներկայիս համաշխարհային տնտեսության գլոբալիզացիայի և տեխնոլոգիական առաջընթացի պայմաններում՝ մի երկրում կամ տարածաշրջանում առաջացած ճգնաժամը արագ կերպով ընդլայնում է իր սահմանները՝ տարածվելով աշխարհով մեկ: Մեր հանրապետությունը ևս դրանից անմասն չմնաց: Հայաստանի Հանրապետությունը նախկին խորհրդային միության փլուզումից հետո ձեռնամուխ եղավ ազատ շուկայական տնտեսական համակարգի ձևավորմանը՝ կառավարության կողմից տնտեսական բարեփոխումների իրականացման ճանապարհով: Տնտեսության անցումային շրջանում ևս մեր տնտեսությունը զեթ չմնաց ճգնաժամային ազդեցություններից: Անցումային շրջանի սկզբնական փուլում առկա էին մի շարք ճգնաժամային երևույթներ և տնտեսության զարգացման վրա բացասաբար անդրադարձող գործոններ՝ կապված ինչպես տնտեսության անցումային շրջանի առանձնահատկությունների, այնպես էլ տարածաշրջանի աշխարհաքաղաքական զարգացումների, պատերազմի և տնտեսական շրջափակման հետ, ինչի հետևանքով մակրոտնտեսական հիմնական ցուցանիշները մեր հանրապետությունում վատթարացել էին: Հետագայում, տնտեսական բարեփոխումների արդյունքում հանրապետությունում մակրոտնտեսական իրավիճակը կայունացավ դրանով իսկ կարևոր նախադրյալ հանդիսանալով տնտեսական հարաբերությունների հետագա զարգացման և տնտեսական ակտիվության խթանման համար: Ակնհայտորեն, իրականացված բարեփոխումների դրական արդյունքների մասին են վկայում անցած տարիներին հանրապետությունում արձանագրված հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների դինամիկան: Տնտեսական ազատական հարաբերություններին անցման փուլում իրականացված բարեփոխումների կարևոր ուղղություններից էր մեր հանրապետության հարկային ոլորտի կայացմանն ու կատարելագործմանն ուղղված մի շարք միջոցառումների իրականացումը: Հայաստանյան տնտեսության դրական տեղաշարժերը մեծապես կապված էին նաև հարկային ոլորտի բարեփոխումների հետ: Սակայն, հարկ է նշել, որ մեր երկրում իրականացվող հարկային քաղաքականությունը բավականաչափ ճկուն չէր և հետագայում, տնտեսական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց և ճգնաժամային մարտահրավերների ի հայտ գալու պայմաններում, այն էական բարեփոխումների չենթարկվեց՝ մնալով միայն ֆիսկալ նպատակներ հետապնդող և դրանով իսկ սկսեց խոչընդոտել տնտեսության զարգացմանն ու գործարար միջավայրի ակտիվացմանը: Միաժամանակ, համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի

հետևանքով հանրապետության տնտեսության առջև ծառայած խնդիրները ցույց են տալիս, որ ներկայումս գործող հարկային համակարգը և իրականացվող հարկային քաղաքականությունը, չլինելով խթանիչ ու արդյունավետ՝ ներկայումս չեն բավարարում տնտեսության զարգացմանն ու կայուն աճին: Հանրապետությունում ներկայումս առկա են մի շարք լուրջ հիմնախնդիրներ, մասնավորապես, օրենսդրական դաշտի անկատարությունը, բարձր հարկային բեռը, անուղղակի հարկերի մեծ տեսակարար կշիռը, տնտեսական նախաձեռնությունների խիստ պակասը և ցածր տնտեսական ակտիվությունը, փոքր և միջին ձեռնարկատիրության ցածր ցուցանիշները, ստվերային տնտեսության մեծ ծավալները, ազգաբնակչության սոցիալ-տնտեսական ծանր վիճակը, գործազրկության բարձր ցուցանիշը և այլ հիմնախնդիրներ: Պետք է նշել, որ վերջին մի քանի տարիներին որոշակի բարեփոխումներ իրականացվել են, սակայն դրանք ունեցել են ավելի շատ վարչարարական բնույթ և էապես չեն նպաստել մեր տնտեսության խթանմանը: Ընդհանուր առմամբ, նշված բարեփոխումները միտված են եղել հիմնականում իրավիճակային խնդիրների լուծմանը: Տնտեսության կայուն և շարունակական աճ ապահովելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել խթանող և ընդլայնողական տնտեսական քաղաքականություն, ինչի համար մեծապես կարևորվում է նաև համալիր հարկային բարեփոխումների իրականացումը՝ կատարելագործելու մեր հանրապետության հարկային համակարգը և բարձրացնելու հարկային քաղաքականության արդյունավետությունը:

Հակաճգնաժամային քաղաքականության համատեքստում՝ տնտեսական հարաբերությունների խթանման և զարգացման համար ներկա փուլում հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացումը պայմանավորված է մի շարք խնդիրների լուծմամբ, որոնցից առավել կարևորներն են հարկային բեռի ընդհանուր կրճատումը, անուղղակի հարկերի կրճատումը, բիզնես միջավայրի բարելավումը, փոքր ու միջին ձեռնարկատիրության խթանումը, ներդրումների համար բարենպաստ հարկային դաշտի ձևավորումը, տնտեսական նախաձեռնությունների խթանումը, առանձին հարկատեսակների դրույքաչափերի նվազեցումը, հարկային վարչարարության արդյունավետության բարձրացումը, հարկային օրենսդրության առավել պարզեցումը և այլն: Նշված հիմնախնդիրների լուծման համար ներկայումս պահանջվում է հարկային քաղաքականության ոլորտում լուրջ համալիր բարեփոխումների իրականացում: Ատենախոսությունը նվիրված է նշված հիմնահարցերի ուսումնասիրությանը, ինչով էլ պայմանավորված են ատենախոսության թեմայի հրատապությունն ու արդիականությունը:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Ատենախոսության թեմայի շրջանակներում, որպես ուսումնասիրության օբյեկտ ընտրվել է Հայաստանի Հանրապետության տնտեսությունը, իսկ ուսումնասիրության առարկա՝ իրականացվող հարկային քաղաքականությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Աշխատանքի հիմնական նպատակը տնտեսական ճգնաժամների ազդեցությունների հաղթահարման նպատակով հարկային քաղաքականության բարեփոխումների վերաբերյալ մոտեցումների և առաջարկությունների մշակումն է, որին հասնելու համար աշխատանքում դրվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել և վերլուծել տնտեսական ճգնաժամների էությունը, դրանց առաջացման և զարգացման էվոլյուցիան, հիմնական տեսակները, ազդեցությունների առանձնահատկությունները և ոլորտները,

- ուսումնասիրել և վերլուծել վերջին ֆինանսատնտեսական ճգնաժամի առաջացման պատճառները և դրա ազդեցությունների բնույթը համաշխարհային տնտեսության և մեր հանրապետության տնտեսության վրա,
- ուսումնասիրել տնտեսության պետական կարգավորման դերը՝ շուկայական տնտեսական հարաբերությունների պայմաններում և վերհանել անցումային տնտեսություններում այդ կարգավորման առանձնահատկությունները,
- ուսումնասիրել ՀՀ հարկային քաղաքականության ձևավորման և զարգացման էվոլյուցիան՝ բացահայտելով դրա դրական ու բացասական կողմերը,
- ուսումնասիրել հարկային քաղաքականության միջազգային փորձը և համեմատական վերլուծություն կատարել ՀՀ և արտասահմանյան երկրների հարկային համակարգերի միջև,
- ուսումնասիրել համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի համատեքստում Հայաստանի Հանրապետության տնտեսության առջև ծառայած հիմնախնդիրները,
- մշակել հանրապետությունում հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների համալիր՝ հակաճգնաժամային տնտեսական քաղաքականության համատեքստում:

Ատենախոսության տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը:

Ատենախոսության համար տեսական հիմք են հանդիսացել այդ ոլորտը կարգավորող ՀՀ օրենքները, իրավական այլ ակտերը, տնտեսագիտության տեսության դասական աշխատությունները, անցումային տնտեսությանը վերաբերող ուսումնասիրությունները, տնտեսական քաղաքականության տարբեր բնագավառներին վերաբերող հայտնական և արտասահմանյան գրականությունը:

Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի, Կենտրոնական բանկի, Ազգային վիճակագրական ծառայության և այլ պետական մարմինների պաշտոնական նյութերն ու տվյալները, սույն ոլորտում հայ և արտերկրյա մասնագետների կողմից կատարված հետազոտությունները, միջազգային գեկոյցներն ու պաշտոնական հրապարակումները:

Հետազոտության մեթոդական հիմքերն են ինդուկցիայի և դեդուկցիայի, պատճառահետևանքների և գիտական արտրակցիայի, մաթեմատիկական և վիճակագրական մեթոդները, ինչպես նաև իրականացվել է գործոնային վերլուծություն՝ հիմք ընդունելով ծրագրային փաթեթների կիրառությունը:

Ատենախոսության գիտական նորույթը: Աշխատանքի հիմնական գիտական արդյունքները, որոնք պայմանավորված են հետազոտությունում առաջադրված խնդիրների լուծմամբ, կայանում են հետևյալում.

- Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությունների և հետճգնաժամային տնտեսական զարգացումների համատեքստում կատարված վերլուծության արդյունքում՝ բացահայտելով ՀՀ տնտեսության զարգացմանը խոչընդոտող՝ հարկային համակարգում առկա հիմնախնդիրները, ներկայացվել են այն նպատակները, որոնք հասնելուն պետք է միտված լինեն առաջիկա տարիներին ՀՀ-ում իրականացվող հարկային քաղաքականության գերակա ուղղությունները:
- ՀՀ հարկային քաղաքականության և այս ոլորտում միջազգային փորձի վերլուծության հիման վրա ներկայացվել են Հայաստանի Հանրապետությունում հակաճգնաժամային տնտեսական քաղաքականության համատեքստում առանձին հարկատեսակների գծով բարեփոխումներ՝ կապված, մասնավորապես, առաջին

անհրաժեշտության ապրանքների և ծառայությունների համար ԱԱՀ-ի արտոնյալ դրույքաչափի սահմանման, ներդրումների ուղղող միջոցների չափով հարկվող շահույթի նվազեցման, հիմնական միջոցների արագացված ամորտիզացիայի կիրառման, ֆիզիկական անձանց եկամուտների մի շարք աղբյուրների հարկման միջոցով բյուջեի եկամուտների ավելացման:

- Հանրապետությունում հարկային վարչարարությանն առնչվող խնդիրների ուսումնասիրության արդյունքում մշակվել են այս ոլորտի պարզեցման, հարկման ինստիտուցիոնալ միջավայրի կատարելագործման որոշ ուղղություններ՝ կապված, մասնավորապես, հարկատուների կողմից հարկային մարմին ներկայացվող հաշվետվությունների քանակի և պարբերականության կրճատման, հաշվետվությունների մեջ լրացվող տեղեկատվության պարզեցման, հարկերի վճարումից խուսափող կազմակերպությունների բացահայտման ընթացակարգերի մշակման, այդ ոլորտում հարկային մարմնի լիազորությունների ընդլայնման, փոքր բիզնեսի ոլորտի համար հարկային հաշվառման առանձնահատուկ եղանակների ներդրման հետ:

Ատենախոսության արդյունքների կիրառությունն ու գործնական նշանակությունը:

Ներկայացված հետազոտության արդյունքները կարող են կիրառվել ճգնաժամային տնտեսությունում առաջացած տնտեսական երևույթների բացասական ազդեցությունը չեզոքացնելու կամ վերացնելու համար՝ հիմք ընդունելով հարկային մեխանիզմների կատարելագործման առաջարկությունները, որոնք էլ կհանգեցնեն տնտեսական քաղաքականության արդյունավետության բարձրացմանը:

Հետազոտության գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ աշխատանքում հակաճգնաժամային միջոցառումների արդյունավետության բարձրացումը պայմանավորված է հարկային քաղաքականության և այն կարգավորող մեխանիզմների կատարելագործմամբ: Աշխատանքում ներկայացված մոտեցումների գործնական կիրառությունը հնարավորություն կտա հանրապետությունում մշակել և իրականացնել արդյունավետ հարկային քաղաքականություն և բարելավել տնտեսական միջավայրն ու ենթակառուցվածքները՝ ապահովելով տնտեսական աճի բարձր տեմպեր:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:

Ատենախոսության հիմնական արդյունքները քննարկվել են ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում: Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակված են թվով 5 գիտական հոդվածներում:

Ատենախոսության ծավալը և կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Հետազոտության տեքստը շարադրված է 154 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆ-ԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության առարկան և օբյեկտը, հետազոտության նպատակը և խնդիրները, աշխատանքի մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը և ստացված արդյունքների կիրառական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ *«Հարկային քաղաքականությունը՝ որպես տնտեսության պետական կարգավորման կարևորագույն լծակ»* գլխում ներկայացվել են հարկման ընդհանուր և մասնավոր տեսությունները, դրանց հիմնական մոտեցումները, հարկման սկզբունքները, ինչպես նաև փորձ է արվել ուսումնասիրելու ժամանակակից հարկային համակարգերը աշխարհի մի շարք երկրների (այդ թվում՝ Հայաստանի) օրինակով:

Տնտեսական հարաբերությունների էվոլյուցիայի ողջ ընթացքում հարկերը եղել և շարունակում են հանդես գալ որպես պետության ֆինանսական ապահովման կարևորագույն և մշտական աղբյուրներից մեկը: Յուրաքանչյուր պետություն մշակում և իրականացնում է տնտեսական, սոցիալական, ժովորդագրական և այլ ներքին ու արտաքին քաղաքականություններ, որոնք աստիճանաբար վերածվում են պետության ֆունկցիոնալ պարտավորությունների և գործունեության հիմնական ուղղությունների: Իր առջև դրված խնդիրների լուծման և ստանձնած պարտավորությունների իրագործման համար պետությունը պետք է հնարավորություն ունենա սեփականության իրավունքով ստօրինելու երկրում ստեղծվող արդյունքի որոշ մասը:

Հարկերի էության և բովանդակության մասին գիտական հայացքների էվոլյուցիան ուղեկցում է պետության զարգացմանը, նրա գործառույթների ընդլայնմանը: Տարբեր ժամանակներում հարկերի և հարկազանձման մասին հայացքներն իրենց արտացոլումն են ստացել տնտեսագիտական տարբեր դպրոցների կողմից ներկայացվող հարկման տեսություններում: Վերջիններս արտացոլում են պետության դերը տնտեսության մեջ: Հասարակական կյանքի զարգացման տարբեր փուլերում տնտեսության մեջ պետության փաստացի դերը տարբեր կերպ է արտահայտվել, ինչն էլ պատճառ է հանդիսացել պետության տարբեր տեսական հիմքերի ձևակերպման համար: Նման տեսությունների շարքում իրենց ուրույն տեղն ունեն հարկման տեսությունները, որոնք ձևավորվել են աստիճանաբար՝ հարկերի դերի մեծացման հետ մեկտեղ: Հարկման տեսություններն իրենցից ներկայացնում են պետության հարկային համակարգի կառուցման տարբեր մոդելներ: Հարկման ընդհանուր և մասնավոր տեսություններն էլ հենց ներկայացվել են ատենախոսության առաջին գլխում:

Ուսումնասիրություններն ու վերլուծությունները ցույց են տալիս, որ «ինչպե՞ս պետք է հարկել» հարցի պատասխանի վերաբերյալ մինչև օրս եղած տեսական ընկալումներն ու մոտեցումները, որոնք իրենց տեսական ձևակերպումներն են ստացել հարկման սկզբունքներում, եղել և շարունակում են մնալ տարբեր: Դա քնական է ու տրամաբանական, քանի որ մարդկանց ապրած ժամանակաշրջանը, միջավայրը, մասնագիտությունը, սոցիալ-հոգեբանական վիճակը և մի շարք այլ պատճառներ ձևավոխում են մարդկանց ընկալումները և մոտեցումները: Ուստի, հարկման սկզբունքների ժամանակակից չավորողիչների ընտրությունը պետք է կատարել՝ ներկա իրողությունները հիմք ընդունելով՝ չմոռանալով, որ տարբեր երկրներում ու տարբեր ժողովուրդների մոտ դրանք տարբեր են:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տարբեր երկրների կողմից կիրառվող հարկատեսակները, դրանց դրույքաչափերը, հարկման բազաները, հարկվող ոլորտները, տրամադրվող արտոնությունները, ինչպես նաև իշխանության տարբեր մակարդակների միջև ֆիսկալ գործառույթների բաշխումը էականորեն տարբերվում են միմյանցից և դրանով հարկային համակարգերը թվում են անհամադրելի, այնուամենայնիվ, կարելի է առանձնացնել ընդհանուր հատկանիշներ, ինչպես օրինակ պետության հարկային մուտքերի ավելացման համար ուղիների մշտական փնտրտուքները և հարկային համակարգերի ձևավորումը՝ ելնելով համընդհանուր ընդունելի սկզբունքներից: Այս հատկանիշներից առաջինն ապահովվում է առանձին երկրներում հարկային ոլորտի բարեփոխումների շնորհիվ, իսկ երկրորդի ապահովումը կախված է սովյալ երկրի կառավարության՝ տնտեսագիտական այս կամ այն տեսությանն առավել կամ պակաս հակված լինելուց: Աշխարհի գրեթե բոլոր երկրներում հարկային հարաբերությունների ձևավորումը կախված է պետական կառուցվածքից:

Հարկային գործոնները գնալով ավելի մեծ դերակատարում են ստանում միջազգային տնտեսական հարաբերությունների ժամանակակից համակարգի գործունեության մեջ: Նման պայմաններում հատկապես կարևորվում է միջազգային տնտեսական կապերի հարկային ոլորտի կարգավորումը, որն իրականացվում է ինչպես միակողմանիորեն՝ առանձին երկրների կողմից, այնպես էլ երկկողմանի և բազմակողմանի հարկային համաձայնագրերի կնքման ճանապարհով:

Ատենախոսության երկրորդ՝ **«Հարկային քաղաքականությունը ֆինանսատնտեսական ճգնաժամերի համատեքստում»** գլուխը նվիրված է ֆինանսատնտեսական ճգնաժամերի էության բացահայտմանը, առաջացման պատճառներին և այդ համատեքստում աշխարհի մի շարք երկրներում ձևավորված հարկային քաղաքականության առանձնահատկություններին, ինչպես նաև այդ երկրներում ճգնաժամի հաղթահարմանն ուղղված հարկային ոլորտի միջոցառումներին:

Տնտեսական ճգնաժամերը տնտեսական համակարգի կամ դրա մեկ կամ մի քանի հատվածների հավասարակշռության երկարատև խախտումներ են, որոնք էապես ազդում են տնտեսության հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վրա: Տնտեսական ճգնաժամերի առաջացման հնարավորությունը և ամխուսափելիությունը պայմանավորված են ապրանքների արտադրության և դրանց սպառման միջև եղած մշտական հակասություններով: Շուկայական տնտեսության զարգացմանը զուգընթաց, ապրանքային և փողի շրջանառության ծավալների մեծացումը ավելի սուր են դարձնում վերոհիշյալ հակասությունների բնույթը:

Ճգնաժամերի պատճառները շատ տարբեր կարող են լինել: Մասնավորապես, դրանք կարող են լինել ինչպես օբյեկտիվ՝ կապված տնտեսության վերազինման ու նորացման հետ, այնպես էլ սուբյեկտիվ՝ կապված տնտեսական կառավարման քաղաքականության մեջ տեղ գտած սխալների և բացթողումների հետ:

2007-2009թթ-ի համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը դեռևս շարունակում է «ցնցել» համաշխարհային տնտեսության հիմքերը: Ընդ որում, ճգնաժամի ազդեցությունն առավել ուժեղ էր այն երկրների տնտեսությունների վրա, որոնք վերջին տասնամյակների ընթացքում առավել հաջողակ են եղել, և հակառակը՝ թերզարգացած և անցումային տնտեսությամբ երկրների տնտեսությունների վրա այդ ազդեցությունը, կարելի է ասել, ավելի փոքր էր:

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը հենց ինքն ի հայտ բերեց աշխարհի տարբեր երկրներում գործող ֆինանսատնտեսական համակարգի

թերությունները, որոնցից էլ անհրաժեշտ է դասեր քաղել ֆինանսատնտեսական քաղաքականության ասպագա քայլերն իրականացնելիս: Հակաճգնաժամային միջոցառումները բազմաթիվ են ու բազմաբնույթ, որոնք կարելի է ներառել 2 խոշորացված խմբերում՝ դրամական բնույթի միջոցառումներ և ոչ դրամական բնույթի միջոցառումներ:

Աշխարհի տարբեր երկրներում իրականացվող հակաճգնաժամային միջոցառումների ուսումնասիրություններն ու վերլուծությունները վկայում են, որ դրանք ընդգրկել են հիմնականում բանկային համակարգը, տնտեսության իրական հատվածը, դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականության ոլորտները, ինչպես նաև բնակչության բացասական սպասումներին հակազդելու ոլորտը: Այս միջոցառումները լայնորեն կիրառվում էին նաև ոչ ճգնաժամային պայմաններում, սակայն այն, ինչ տարանջատում էր նրանց ճգնաժամից, այն է, որ նրանք պետք է առավել խիստ ուշադրությամբ կիրառվեն ճգնաժամին բնորոշ խնդիրների լուծման համար:

Բազմաթիվ երկրների մեծ թվով հակաճգնաժամային միջոցառումներ ներառում էին նաև հարկային ոլորտի փոփոխություններ, որոնք մասնավորապես նախատեսում էին հարկերի նվազում: Չեռնարկված միջոցառումները վերաբերում էին ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց: Նշենք նաև, որ գործնականում հակառակ ուղղությամբ միջոցառումներ նույնպես ձեռնարկվել են. մասնավորապես ավելացվել է գանձվող հարկերի ու վճարների չափը, ինչպես նաև եղել են դեպքեր, երբ չեղյալ են համարվել նախկինում սահմանված հարկային արտոնությունները:

Աշխարհի շատ երկրներում ճգնաժամի պայմաններում ծշակվել են անհրաժեշտ միջոցառումներ, որոնք ուղղված են եղել խթանելու գործարար ակտիվությունը: Պետություններն ակտիվ քաղաքականություն են իրականացնում՝ փորձելով նվազեցնել ճգնաժամով պայմանավորված տնտեսությունում առկա և սպասվելիք հնարավոր բացասական միտումները: Այդ գործընթացի իրականացման համար կիրառվում է նաև հարկաբյուջետային գործիքակազմը:


Մեծ թվով երկրներում այդ փոփոխություններն իրականացվել են հարկային բեռը նվազեցնելու նպատակով: Հարկային ոլորտի որոշ փոփոխություններ իրականացվում էին տնտեսության որոշակի ճյուղերի օգնելու նպատակով, մասնավորապես՝ աջակցություն էր ցուցաբերվում այն կազմակերպություններին, որոնք ներդրումներ են իրականացնում գիտական ոլորտում (այդպես էր արվում օրինակ Չինաստանում, ԱՄՆ-ում), փոքր և միջին ձեռնարկություններին, ինչպես նաև անշարժ գույքի ոլորտին: Ենթադրվում է, որ նորարարությանը, ինչպես նաև փոքր և միջին ձեռնարկություններին տրամադրվող աջակցությունը կնպաստի ազգային տնտեսության մրցունակության մակարդակի բարձրացմանը, այն դեպքում, երբ անշարժ գույքի ոլորտին ցուցաբերվող օգնությունն ուղղվում էր ճգնաժամի պայմաններում ամենաշատը տուժած ոլորտի պահպանմանը:

Այս ամենով համղերձ՝ տարբեր երկրների կողմից գլոբալ ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում ձեռնարկված հարկային ոլորտի միջոցառումները մոտ ժամանակներում կարող են ճիշտ հակառակ ուղղությունը ստանալ, քանի որ պետությունները ստիպված կլինեն լուծել բյուջեների անձամ դեֆիցիտի կրճատման խնդիրը: Նշենք, որ ԵՄ անդամ երկրներում 2008թ-ի ճգնաժամը հաղթահարելու քայլերը հարկային քաղաքականության առումով միատարր չեն եղել: Վերջինս նաև պայմանավորված է նրանով, որ որոշ երկրներ իրենց հարկային քաղաքականության շրջանակներում ավելի շատ կենտրոնացած են ուղղակի հարկերի վրա, իսկ մյուսները՝

անտղղակի: Այնուամենայնիվ, հարկային համակարգում կատարվող փոփոխությունները տնտեսության վերականգնման և ապագա կայուն զարգացման համար մեծ կարևորություն ունեն ոչ միայն ԵՄ անդամ, այլ, առհասարակ, ճգնաժամից տուժած բոլոր երկրների համար: Նման փոփոխությունները հնարավորություն են տալիս լուծել այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք են պետական պարտքի և բյուջեի դեֆիցիտի կրճատումը, զբաղվածության աճի, ներդրումների ավելացման, ինչպես նաև ՀՆԱ-ի աճի ապահովումը: Այս առումով, պատահական չեն Քեյնսի այն խոսքերը, որ հարկերը շուկայական տնտեսությունում համոզես են գալիս որպես ճկունության ապահովման ներկառուցված մեխանիզմներ¹:

Հայաստանի Հանրապետությանը, ինչպես և աշխարհի բազմաթիվ երկրների, չհաջողվեց խուսափել համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությունից, որի հիմնական հարվածն իր վրա ընդունեց տնտեսության իրական հատվածը՝ արձանագրելով անկման միտումներ: Եզնաժամի բացասական ազդեցության առաջին ալիքին Հայաստանի Հանրապետությանը հաջողվեց դիմակայել, շնորհիվ արդյունավետ ֆինանսական վերահսկողության, որի արդյունքում ֆինանսական համակարգի կայունությունը բնութագրող ցուցանիշները պատմականորեն գտնվել են բարձր մակարդակի վրա: Միևնույն ժամանակ բույլ էին կապերը միջազգային ֆինանսական շուկաների այն հատվածների հետ, որտեղ արձանագրվեց ճգնաժամի առաջին ալիքը: Մասնավորապես, ի տարբերություն զարգացած երկրների, Հայաստանի ֆինանսական շուկաներում՝ բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում շրջանակներում խուճապ, չարվեց իրացվելիության նկատմամբ պահանջարկը: Եվ չնայած այն հանգամանքին, որ 2008թ. ՀՆԱ-ի հավելանք ծրագրվածից ցածր էր, այնուամենայնիվ, տնտեսությունն արձանագրեց 6.8% տնտեսական աճ՝ ԱՊՀ երկրների 5% տնտեսական աճի միջին ցուցանիշի դիմաց: Հայաստանը տնտեսական աճի ցուցանիշով առաջ էր անցել Ռուսաստանից (5.6%) և Ուկրաինայից (2.1%): Եթե ԱԱՀ-ի, շահութահարկի և եկամտահարկի դրույքաչափերի տեսանկյունից Հայաստանը համեմատության մեջ դրվի ԵՄ անդամ երկրների հետ, ապա ակնհայտ է դառնում, որ 2008-2012թթ-ի ընթացքում ՀՀ-ում եկամտահարկի և շահութահարկի դրույքաչափերը ցածր են եղել ԵՄ միջինից (գծապատկեր 1), իսկ ինչ վերաբերում է ԱԱՀ-ի դրույքաչափին, ապա վերջինս միայն 2008 և 2009թթ. գերազանցել է ԵՄ միջին ցուցանիշը:


¹Д.Р.Черник, Ю.Д.Шмелев/ Кризис и налоги/ Москваиздательство «Экономика»/2011-253стр,



Գծապատկեր 1.

2008-2012թթ. ԱԱՀ-ի, շահութահարկի, եկամտահարկի միջին դրույթաչափերի դինամիկան ԵՄ անդամ երկրներում, %

Վերը թվարկված հարկատեսակների ու ՀՆԱ-ի հարաբերակցության ցուցանիշների փոփոխությունները ՀՀ-ում ներկայացված են գծապատկեր 2-ում:



Գծապատկեր 2

2008-2012թթ. եկամտահարկ/ՀՆԱ, շահութահարկ/ՀՆԱ, ԱԱՀ/ՀՆԱ հարաբերակցությունների փոփոխությունը ՀՀ-ում, %²

Հարկային եկամուտների հավաքման և վարչարարության բարելավման առումով 2008թ. աննախադեպ է եղել՝ հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունն աճել է 0.9 տոկոսային կետով և կազմել 17.0%: Այս արդյունքին հնարավոր է եղել հասնել հարկային վարչարարության բնագավառում իրականացված արմատական բարեփոխումների շնորհիվ:

Հաշվի առնելով ՀՀ տնտեսության վրա համաշխարհային ճգնաժամի ունեցած ազդեցությունը՝ ՀՀ կառավարության կողմից իրականացվող հակաճգնաժամային քաղաքականության արձագանքը ուղղված էր ոչ թե ֆինանսական ինստիտուտների հզորացմանը և հնարավոր ռիսկերից լրացուցիչ ապահովագրմանը, այլ հիմնականում տնտեսական ակտիվության խթանմանը: Մակրոտնտեսական կայունության ապահովման նպատակով կառավարությունը կիրառել է նաև իր հարկաբյուջետային ամբողջ գործիքակազմը՝ փորձելով նվազող հարկային եկամուտների պայմաններում պահպանել բյուջետային ծախսերի մակարդակը, որի աղբյուր դարձան առկա պահուստային և ներգրավված արտաքին ռեսուրսները:

²<http://www.armstat.am/file/doc/99471508.pdf>

Ատենախոսության երրորդ՝ «Հարկային հակաճգնաժամային միջոցառումների արդյունավետության բարձրացման ուղիները ՀՀ-ում» զվխում ներկայացված են հետճգնաժամային զարգացումների փուլում ՀՀ հարկային համակարգի հիմնախնդիրները և ներկայացված է հարկային քաղականության բարեփոխումների փաթեթ՝ հակաճգնաժամային տնտեսական քաղաքականության համատեքստում:

Հայաստանում հարկային համակարգի ձևավորման երկրորդ փուլից հետո, երկրում հաստատվեց մակրոտնտեսական կայունություն, ինչի մասին են վկայում երկրի հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերադարձումը, որն արտացոլված է ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 1.

2003-2011 թթ. հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները ՀՀ-ում³

Ցուցանիշներ	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011
ՀՆԱ իրական աճ, %	14,0	10,5	13,9	13,2	13,8	6,9	-14,2	2,7	4,6
Ներդրումներ/ՀՆԱ, %	24,3	24,9	30,5	35,9	37,8	40,9	33,8	31,2	31,1
Պետական բյուջեի ընդամենը եկամուտներ, մլրդ դրամ	292,0	302,2	374,7	441,5	588,0	785,3	672,1	742,1	850
Պետական բյուջեի ընդամենը եկամուտներ/ՀՆԱ %	18,0	15,8	16,7	16,6	18,7	21,5	21,66	23,09	22,58
Հարկային եկամուտներ և տուրքեր, մլրդ դրամ	227,4	267,0	321,5	385,1	498,9	621,1	520,2	570,0	650
Պետական բյուջեի հարկային եկամուտներ և տուրքեր/ՀՆԱ %	14,0	14,0	14,4	14,5	16,1	17,0	16,77	17,06	17,27
Պետական բյուջեի ընդամենը ծախսեր, մլրդ	312,7	333,9	417,2	481,2	634,7	810,6	912,8	935,5	998,6
Պետական բյուջեի ընդամենը ծախսեր/ՀՆԱ, %	19,3	17,5	18,6	18,1	20,2	22,2	29,42	29,1	26,53
Պետական բյուջեի պակասուրդ /ՀՆԱ, %	1,3	1,7	1,9	1,5	1,5	1,2	7,76	6,02	3,95

Ինչպես ցույց են տալիս աղյուսակ 1-ի տվյալները, մինչև 2008 թվականին սկիզբ առած ֆինանսատնտեսական ճգնաժամը, հանրապետությունում զբանցվել են բավականաչափ բարձր մակրոտնտեսական ցուցանիշներ և բավականին բարձր ու անընդմեջ տնտեսական աճ՝ միջինը կազմելով տարեկան 9.2%: Սկսած 2008 թվականից՝ պայմանավորված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամով՝ հանրապետությունում արժանագրվել է տնտեսական աճի ցուցանիշի նվազում, իսկ այնուհետև տնտեսական անկում:

Բնականաբար, տնտեսության մեջ տեղ գտնող զլոբալ զարգացումներն իրենց համապատասխան ազդեցությունը պետք է ունենային հարկային քաղաքականության և մասնավորապես, հարկային մուտքերի ձևավորման գործընթացի վրա: Սակայն, 2009թ-ին արժանագրվել է պետական բյուջեի եկամուտների անկում և համապատասխան ցուցանիշը կազմել է 642.1 մլրդ դրամ: Ինչ վերաբերում է հարկային քաղաքականության մյուս կարևոր ցուցանիշին՝ ուղղակի և անուղղակի հարկերի հարաբերակցությանը, ապա պետք է ասել, որ մեր հանրապետությունում զգալիորեն զերակշռում են անուղղակի հարկերը:

Աղյուսակ 2.

³armstat.am

2007-2012թթ հարկային եկամուտների կառուցվածքը ՀՀ-ում, %⁴

	2007	2008	2009	2010	2011	2012
Հարկային եկամուտներ	100	100	100	100	100	100
Ավելացված արժեքի հարկ	49.1	53.2	48,8	49.90	51.4	50.3
Ակցիզային հարկ	8.2	7.7	8.2	12.92	3.7	4
Շահութահարկ	14.9	14.4	15,7	13.6	15.5	18.2
Եկամտահարկ	9.3	9.0	11,6	12.92	12.89	13.1
Հաստատագրված վճար	3.5	3.4	4.4	4.4	3.2	2
Այլ հարկային եկամուտներ	15	12,3	11,3	6,26	13,31	12,4

Մասնավորապես, միայն ավելացված արժեքի հարկի, ակցիզային հարկի և մաքսատուրքի բաժինը պետական բյուջեի հարկային եկամուտների կազմում 2009 թվականին կազմել է շուրջ 60%: Ինչ վերաբերում է հաջորդ տարիներին, ապա այդ ցուցանիշը փոքր ինչ նվազելու միտում է ունեցել, սակայն, մնալով բավականին բարձր: 2012 թվականի կտրվածքով պետական բյուջե վճարվող ուղղակի հարկերը կազմել են պետական բյուջեի հարկային եկամուտների 31,3%-ը. ինչը նախորդ տարվա համեմատությամբ աճել էր 2.9 տոկոսային կետով: Այսպես, 2012 թվականին անուղղակի հարկերի տեսակարար կշիռը կազմել է 54.3 %, ինչը 0.7 տոկոսային կետով նվազել է նախորդ տարվա ցուցանիշի համեմատ: Չնայած այս համեմատմանը՝ պետք է նշել, որ հարկային եկամուտների կառուցվածքում դեռևս շարունակում են մեծ տեսակարար կշիռ կազմել անուղղակի հարկերը:

Թեև Հայաստանի կառավարությանը հակաճգնաժամային միջոցառումների շնորհիվ հաջողվեց վերականգնել տնտեսական հավասարակշռությունը հետճգնաժամային շրջանում, սակայն դա հարկային ասպեկտով հիմնականում ապահովվեց հարկերի ֆիսկալ գործառույթի հաշվին:

ՀՀ հարկային համակարգը ներկայումս բնորոշվում է մի շարք թերություններով, ինչն իր համապատասխան ազդեցությունն է ունենում երկրում իրականացվող մակրոտնտեսական քաղաքականության արդյունավետության վրա: Այդ թերություններից, մասնավորապես, հատկանշական են հետևյալները.

- բարձր հարկային բեռը և դրա անհավասարաչափ բաշխումը,
- հարկերի ֆիսկալ գործառույթի գերակայությունը՝ կարգավորիչ և խթանիչ գործառույթների նկատմամբ,
- անուղղակի հարկերի բավականին բարձր տեսակարար կշիռը,
- իրականացվող հարկային քաղաքականության մեթոդների և վարչարարության անհամապատասխանությունը տնտեսության առջև ծառայած հիմնախնդիրներին,
- հարկային օրենսդրության անկայունությունը և բարդությունը,
- հարկային մարմիններում հովանավորչության դրսևորումները,
- սովետային շրջանառության մեծ տեսակարար կշիռը,
- հարկային արտոնությունների ամարդյունավետ համակարգի առկայությունը և այլն:

⁴ taxinfo.am

Նշված թերությունները դիտարկելով՝ ակնհայտ է դառնում, որ ներկա փուլում, Հայաստանի Հանրապետությունում գործող հարկային համակարգը և հարկային քաղաքականությունը բավարար արդյունավետ չեն՝ տնտեսական հարաբերությունների հետագա զարգացման և կայուն տնտեսական աճ ապահովելու համար: ՀՀ տնտեսության համար հետճգնաժամային փուլում հարկային համակարգի արդյունավետության գլխավոր չափորոշիչը պետք է հանդիսանա տնտեսության իրական հատվածի և բուն արտադրության ոլորտի խթանման կարողությունը: Այս առումով կարևոր չափանիշ կարող է հանդիսանալ հարկերի գործառույթների այնպիսի համակցումը, որը կապահովի տնտեսական հավասարակշռություն ինչպես մակրո, այնպես էլ միկրոմիջավայրերում, կապահովի տնտեսության կայուն և երկարատև աճ, կխթանի արտադրության ընդլայնումը և կնպաստի ազգաբնակչության կենսամակարդակի բարձրացմանը:

Հայաստանի Հանրապետությունում հակաճգնաժամային քաղաքականության համատեքստում՝ հարկային քաղաքականության հիմքում անհրաժեշտ է դնել մի շարք կարևորագույն նպատակներ.

- հարկային բեռի կրճատում և դրա հավասարաչափ բաշխում,
- հարկման բազայի ընդլայնում,
- անուղղակի հարկերի կրճատում,
- սպառման խթանում,
- ներդրումների խթանում,
- տնտեսության իրական հատվածի զարգացում,
- հարկային օրենսդրության պարզեցում և դրա կայունության ապահովում,
- հարկատեսակների և հարկերի դրույքաչափերի վերանայում,
- հարկային վարչարարության կատարելագործում և ծախսատարության կրճատում,
- բոլոր հարկատուների համար հարկման համահավասարության և արդարության սկզբունքների գերակայություն:

Ինչ վերաբերում է տնտեսական անկմանը և ճգնաժամին, պետք է ասել, որ նման իրավիճակներում կտրուկ նվազող համախառն պահանջարկը հնարավոր է պահպանել կամ գոնե դրա կրճատման չափերը նվազեցնել հարկային բեռի նվազեցման ճանապարհով: Այս քայլը կնպաստի նաև ներդրումների խթանմանը, ինչն այդքան կարևոր է տնտեսական անկման ժամանակ: Վերջին ճգնաժամի պայմաններում աշխարհի բազմաթիվ երկրներ նվազեցրեցին հարկային բեռը ընդհուպ մինչև որոշակի հարակատեսակների լրիվ վերացում: Ինչ վերաբերում է մեր հանրապետությանը, ապա այստեղ որևէ կերպ հարկային բեռի նվազեցում տեղի չունեցավ, ավելի՛ն եկամտային նոր հարկ ներմուծվեց, որը փոխարինելու էր եկամտահարկին և սոցվճարին:

ՀՀ հարկային համակարգը բնութագրվում է անուղղակի հարկերի բարձր տեսակարար կշռով, իսկ իրականացվող հարկային քաղաքականությունը հիմնվում է բացառապես հարկերի ֆիսկալ գործառույթի վրա: Իսկ եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ անուղղակի հարկերի վերջնական վճարողը մեր ազգաբնակչությունն է, ապա ներկա պայմաններում այդ հարկերի տեսակակար կշռի նվազեցումը հրատապ խնդիր է:

Շահութահարկի գծով հակաճգնաժամային բարեփոխումներից կարելի առանձնացնել արագացված ամորտիզացիայի կիրառումը, որի շնորհիվ հարկման ենթակա եկամուտներից նվազեցվող ամորտիզացիոն մասհանումների հաշվարկային մեծությունը գերազանցում է տնտեսապես հիմնավորված ամորտիզացիայի մեծությամբ:

Դրա շնորհիվ շահույթի որոշակի մասն ազատվում է հարկումից՝ ամորտիզացվող գումարը ծախսերին վերագրելու միջոցով: Արագացված ամորտիզացիայի կիրառման հիմնական առանձնահատկությունը ներդրումների աճին նպաստելն է հատկապես էկոլոգիական նշանակության, ինչպես նաև ջուր և էներգիա խնայող տեխնիկայի և տեխնոլոգիայի ներդրման ուղղությամբ:

Շահութահարկի գծով հարկային արտոնությունների կարևոր ուղղություններից է հարկվող շահույթի նվազեցումը, եթե այդ միջոցներն ուղղվելու են ներդրումների ֆինանսավորմանը: Ներդրումների մեծությունից կախված՝ կարող են սահմանվել առանձին դրույքներ, քանի որ պետական քաղաքականության տեսանկյունից հատկապես ճգնաժամի պայմաններում արդարացված չէ այն, որ կապիտալ ներդրումներ իրականացնող և չիրականացնող կազմակերպությունները հարկման տեսանկյունից գրեթե նույն պայմաններում են գտնվում:

Հակաճգնաժամային հարկային բարեփոխումների շարքում կարելի է առանձնացնել նաև շահութահարկի գծով կանխավճարների վճարման կարգի և դրույքաչափի փոփոխությունը: Գնաժամի պայմաններում կազմակերպությունները հայտնվում են ֆինանսական դժվար կացության մեջ: Նման իրավիճակում նպատակահարմար չի լինի ստիպել կազմակերպություններին շարունակել նախկին ձևով կատարել կանխավճարների գծով իրենց պարտավորությունները: Օրենսդրության փոփոխության արդյունքում շահութահարկի կանխավճարների մուծման հաճախականությունը և դրույքաչափը նվազեցնելը հնարավորություն կտան ձեռնարկություններին ֆինանսական որոշակի միջոցներ ունենալ իրենց տրամադրության տակ, որոնք կարող են օգտագործվել արտադրության արդիականացման և վերազինման, ինչպես նաև գործունեության ընդլայնման համար:

Ներկայումս, ֆիզիկական անձանց եկամուտների հարկման համակարգը հիմնականում կենտրոնացած է աշխատավարձի հարկման ուղղությամբ: Սակայն կան նաև եկամտի այլ աղբյուրներ, որոնք հարկման դաշտում չեն ընդհանրապես կամ նվազեցվում են հարվող եկամտից, քնն ֆիզիկական անձանց եկամուտների մաս են կազմում (ինչպես օրինակ ժառանգությունն ու մվիրատվությունը, ֆինանսական ոլորտի գործառնություններից ձևավորվող եկամուտը, այտասահմանյան դրամական փոխանցումները, չհայտարարագրված ունեցվածքը և այլն): Այսպիսով, ստացվում է, որ ֆիզիկական անձանց եկամուտների հարկումը չի կրում համընդհանուր և համահավասար բնույթ, չի ապահովվում արդյունավետ վերաբաշխում՝ բնակչության եկամուտների համահարթեցման նպատակով, դյուրով իսկ անտեսվում է արդարության սկզբունքը: Ֆիզիկական անձանց բազմաթիվ տնտեսական գործունեություններ վերագրվել է արտոնագրային վճարներով հարկման դաշտին, ինչը նույնպես տնտեսապես հիմնավորված չէ: Նման խնդիրներն ավելի ակնհայտ են դառնում ու ավելի բացասական ազդեցություն են ունենում հատկապես ճգնաժամի պայմաններում: Հաշվի առնելով երկրի սոցիալ-տնտեսական վիճակը, հարկային համակարգի առանձնահատկությունները և առկա ճգնաժամային երևույթները՝ ֆիզիկական անձանց եկամուտների հարկման համակարգի բարեփոխումները կարող են ուղղված լինել՝

- ֆիզիկական անձանց եկամուտների մի շարք աղբյուրների հարկման միջոցով բյուջեի եկամուտների ավելացմանը,
- ֆիզիկական անձանց եկամուտների ու ծախսերի նկատմամբ արդյունավետ հսկողություն սահմանելուն,

- հարկման գործընթացում արդարության ապահովմանը, բնակչության եկամուտների չափազանց մեծ տարբերակվածությունը նվազեցնելու և հասարակության անապահով մասի օգտին դրանք վերաբաշխելու նպատակով հարկման պրոգրեսիվություն կիրառելուն և հարկային արտոնություններ սահմանելուն:

Նշված նպատակների իրագործման համար անհրաժեշտ կլինի մշակել և ներդնել փոխկապակցված հարկերի համակարգ, որն ընդգրկի ֆիզիկական անձանց եկամուտները և ունեցվածքը, իչպես նաև հիմնված լինի կատարված ծախսերի միջոցով ֆիզիկական անձանց եկամուտների չափը բացահայտելուն: Համակարգը կարող է առավել արդյունավետ գործել համընդհանուր պրոգրեսիվ հարկ կիրառելու դեպքում՝ հիմքում դնելով ֆիսկալ և սոցիալական (արդարացի լինելու) տեսանկյուններից դրա արդյունավետությունը: Նպատակահարմար կլինի հարկման դրույքը սահմանել՝ ելնելով ոչ թե անվանական, այլ իրական եկամտի մեծությունից (այսինքն հաշվի առնելով եկամուտների գնողունակությունը), հասարակության ապահովված և հարուստ խմբերի համար սահմանել ավելի բարձր դրույք, քան ապահովվածության միջին և ցածր մակարդակ ունեցողների համար, հարկումից ազատել կենսաապահովման նվազագույն մակարդակից ցածր եկամուտ ունեցողներին, եկամտահարկի հաշվարկման մեխանիզմում ներառել ինֆլյացիայի մակարդակը հաշվի առնող գործակից: Անհրաժեշտ կլինի նաև կատարել համապատասխան օրենսդրական փոփոխություններ և ապահովել համակարգի գործողության նկատմամբ համապատասխան պետական ​​​​սկսողություն:

Հարկային բարեփոխումների իրականացման փուլում, ակնհայտորեն, չափազանց մեծ է հարկային վարչարարության դերը: Հայաստանի Հանրապետությունում իրականացվող հարկային քաղաքականությունը՝ իրականացման մեթոդներով վարչարարական և բավականին ծախսատար բնույթ ունի, ինչը, բնականաբար, բացասաբար է անդրադառնում դրա արդյունավետության վրա: Հարկային վարչարարության արդյունավետության բարձրացումը պետք է իրականացվի հարկային մարմիններին վերապահված իրավասությունների հստակեցման և, միաժամանակ, հարկատուների պատասխանատվության բարձրացման գույակցմամբ: Ինչ վերաբերում է հարկային վարչարարության բարեփոխումների ցանկալի արդյունքներին, ապա դրանք, մախ և առաջ, պետք է կայանան հետևյալում.

- հանրապետության հարկային համակարգի արդյունավետության, հաշվեկշռվածության և թափանցիկության մակարդակի բարձրացում՝ ապահովելով անհրաժեշտ պայմաններ պետության սահմանադրական գործառույթների իրականացման, քաղաքացիների բավարար կենսամակարդակի երաշխավորման, տնտեսական գործունեության իրականացման համար,
- հարկման իմստիտուցիոնալ միջավայրի կատարելագործում, որը կապահովի բարենպաստ միջավայր ձեռնարկատիրական գործունեության իրականացման, օրենքի առջև բոլոր հարկ վճարողների իրավահավասարության և հարկային պարտավորությունների ամբողջական և ժամանակին իրականացման համար,
- իրավական պետության և քաղաքացիական հասարակության պահանջներին բավարարող սկզբունքների վրա հիմնված հարկային իրավահարաբերությունների ձևավորում:

Հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման միջոցառումները պետք է ուղեկցվեն համապատասխան օրենսդրական փոփոխություններով՝ նպատակ ունենալով առկա խնդիրներին տալ բազմակողմանի և համակարգված լուծումներ:

Եզրակացություններ բաժնում ատենախոսության բեմայի շրջանակներում դրված խնդիրներին ու նպատակներին համապատասխան արված ուսումնասիրություններն ու վերլուծությունները թույլ են տալիս կատարել մի շարք եզրակացություններ, ինչպիսիք են՝

1. Տնտեսական ճգնաժամերը տնտեսական համակարգի կամ դրա մեկ կամ մի քանի հատվածների հավասարակշռության երկարատև խախտումներ են, որոնք էապես ազդում են տնտեսության հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վրա: Տնտեսական ճգնաժամերի առաջացման հնարավորությունը և անխուսափելիությունը պայմանավորված են ապրանքների արտադրության և դրանց սպառման միջև եղած մշտական հակասություններով: Շուկայական տնտեսության զարգացմանը զուգընթաց, ապրանքային և փողի շրջանառության ծավալների մեծացումը ավելի սուր են դարձնում վերոհիշյալ հակասությունների բնույթը: Վերջին համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամն իր խորությամբ, ընդգրկվածության աստիճանով և ազդեցությամբ համարվում է հետպատերազմյան տարիներին նմանօրինակը չունեցող առաջին ճգնաժամը: Վերջինիս արդյունքում ամհրաժեշտություն է առաջացել կրկին վերանայելու տնտեսության ցիկլային տատանումների պատճառները, քանի որ երևան եկան ժամանակակից տնտեսության զարգացման ներքին կառուցվածքային անհամաչափություններ և անհրաժեշտություն առաջացավ ճգնաժամային իրավիճակների հաղթահարման նոր մեխանիզմներ փնտրել: Ավելի հաճախակի դարձող ճգնաժամերը ցույց են տալիս, որ միայն պետությունը իր համապատասխան լծակների և հակաճգնաժամային արդյունավետ քաղաքականության միջոցով կարող է մեղմել այդ ճգնաժամերի ազդեցությունը և հաղթահարել դրանց բացասական հետևանքները: Այդ քաղաքականության մեջ մեծ դեր ունի հարկային քաղաքականությունը, որը պետք է նպաստի տնտեսության խթանմանը, տնտեսական աճի կայուն տևելների ապահովմանը, ազգաբնակչության սոցիալական ամհավասարության նվազեցմանը, փոքր ու միջին բիզնեսի կայացմանը, գործարար միջավայրի ակտիվացմանն ու զարգացմանը:
2. Հետճգնաժամային տնտեսական զարգացումների ներկա փուլում, մեր հանրապետությունում կարևոր հիմնախնդիր է դառնում տնտեսության և մասնավորապես, ձեռնարկատիրության զարգացման համար համապատասխան բարենպաստ պայմանների և անհրաժեշտ խթանների ստեղծումը: Նշվածը կարող է իրականացվել միայն ճկուն հարկային քաղաքականության շնորհիվ՝ կիրառելով հարկային համակարգի որակապես նոր մոտեցումներ, ինչը արդյունքում կհանգեցնի նաև պետական բյուջեի հարկային եկամտունեքի ավելացմանը:
3. Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը ներկայումս բնորոշվում է մի շարք թերություններով, ինչն իր համապատասխան ազդեցությունն է ունենում երկրում իրականացվող հակաճգնաժամային մակրոտնտեսական քաղաքականության արդյունավետության վրա: Դրանցից մասնավորապես, հատկանշական են.
 - բարձր հարկային բեռը և դրա անհավասարաչափ բաշխումը,

- հարկերի ֆիսկալ գործառույթի գերակայությունը՝ կարգավորիչ և խթանիչ գործառույթների նկատմամբ,
- անուղղակի հարկերի բավականին բարձր տեսակարար կշիռը,
- իրականացվող հարկային քաղաքականության մեթոդների և վարչարարության անհամապատասխանությունը տնտեսության առջև ծառայած հիմնախնդիրներին,
- հարկային օրենսդրության անկայունությունը և բարդությունը,
- սուվերային շրջանառության մեծ տեսակարար կշիռը:

Նշված և այլ հիմնախնդիրների լուծման համար մեծապես կարևորվում է հարկային քաղաքականության ուղղությունների վերանայումը և դրա արդյունավետության բարձրացումը:

4. Հայաստանի Հանրապետության տնտեսության համար՝ հետճգնաժամային փուլում հարկային համակարգի արդյունավետության գլխավոր չափորոշիչը պետք է հանդիսանա տնտեսության իրական հատվածի և բուն արտադրության ոլորտի խթանման կարողությունը: Այս առումով կարևոր չափանիշ կարող է հանդիսանալ հարկերի գործառույթների այնպիսի համակցումը, որը կապահովի տնտեսական հավասարակշռություն ինչպես մակրո, այնպես էլ միկրոմիջավայրերում, կապահովի տնտեսության կայուն և երկարատև աճ, կխթանի արտադրության ընդլայնումը և կմպաստի ազգաբնակչության կենսամակարդակի բարձրացմանը:

5. Հակաճգնաժամային քաղաքականության համատեքստում՝ հարկային քաղաքականության հիմքում անհրաժեշտ է դնել մի շարք կարևորագույն նպատակներ.

- հարկային բեռի կրճատում և դրա հավասարաչափ բաշխում,
- հարկման բազայի ընդլայնում,
- անուղղակի հարկերի կրճատում,
- սպառման խթանում,
- ներդրումների խթանում,
- տնտեսության իրական հատվածի զարգացում,
- հարկային օրենսդրության պարզեցում և դրա կայունության ապահովում,
- հարկատեսակների և հարկերի դրույքաչափերի վերանայում,
- հարկային վարչարարության կատարելագործում և ծախսատարության կրճատում,
- բոլոր հարկատուների համար հարկման համահավասարության և արդարության սկզբունքների գերակայություն:

Նշված նպատակների իրագործման արդյունքում հարկային քաղաքականությունը կդառնա երկրի տնտեսության զարգացմանը խթանող կարևորագույն լծակներից մեկը:

6. ԱԱՀ-ն, որպես անուղղակի հարկատեսակ, կարևոր գործիք է տնտեսության պետական կարգավորման համար: Ներառվելով սպրանքի գնի մեջ՝ ԱԱՀ-ն մակ կարևոր գործոն է հանդիսանում առաջարկի ու պահանջարկի ձևավորման հարցում և ուղղակիորեն ներազդում է արտադրության ծավալների և հետևաբար՝ երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա: Ներկայումս, հանրապետությունում ԱԱՀ-ին առնչվող կարևորագույն խնդիրներից մեկը կապված է այդ հարկատեսակի բարձր և ստանդարտ կերպով կիրառվող հարկադրույքի հետ: Տնտեսական զարգացումների ներկայիս փուլում՝ ԱԱՀ-ի դրույքի նվազեցումը կարող է

էականորեն նպաստել արտադրության ծավալների ընդլայնմանը և ապրանքների ընդհանուր գների նվազեցմանը, ինչը հատկապես կարևոր է ճգնաժամի պայմաններում: Հակաճգնաժամային հարկային միջոցառումների շարքում նպատակահարմար կլինի նաև կենսական նշանակության ապրանքների և ծառայությունների համար կիրառել ԱԱՀ-ի նվազեցված դրույք (ինչպես արվում է աշխարհի բազմաթիվ երկրներում): Նվազեցված դրույքը հիմնականում կիրառվում է առաջին անհրաժեշտության մթերային, դեղագործական ապրանքների, ջրամատակարարման, էներգամատակարարման, պարբերականների տպագրության, ուղևորատար տրանսպորտային ծառայության և նման այլ սոցիալական նշանակության ոլորտի ապրանքների և ծառայությունների նկատմամբ: Ծգնաժամային իրավիճակում հարկադրույքի իջեցման պատճառով բյուջետային մուտքերի նվազեցումը հնարավոր կլինի փոխհատուցել շնորհիվ այլ հարկային մուտքերի ավելացման, ինչպես նաև անարդյունավետ բյուջետային ծախսերի կրճատման ճանապարհով:

7. Ծահուփահարկի գծով հակաճգնաժամային բարեփոխումներից կարելի առանձնացնել արագացված ամորտիզացիայի կիրառումը, որի շնորհիվ հարկման ենթակա եկամուտներից նվազեցվող ամորտիզացիոն մասհանումների հաշվարկային մեծությունը գերազանցում է տնտեսապես հիմնավորված ամորտիզացիայի մեծությանը: Դրա շնորհիվ շահույթի որոշակի մասն ազատվում է հարկումից՝ ամորտիզացվող գումարը ծախսերին վերագրելու միջոցով: Արագացված ամորտիզացիայի կիրառման հիմնական առանձնահատկությունը ներդրումների աճին նպաստելն է:

Ծահուփահարկի գծով հարկային արտոնությունների կարևոր ուղղություններից է հարկվող շահույթի նվազեցումը, եթե այդ միջոցներն ուղղվելու են ներդրումների ֆինանսավորմանը: Ներդրումների մեծությունից կախված՝ կարող են սահմանվել առանձին դրույքներ, քանի որ պետական քաղաքականության տեսանկյունից հատկապես ճգնաժամի պայմաններում արդարացված չէ այն, որ կապիտալ ներդրումներ իրականացնող և չիրականացնող կազմակերպությունները հարկման տեսանկյունից գրեթե նույն պայմաններում են գտնվում:

Հակաճգնաժամային հարկային բարեփոխումների շարքում կարելի է առանձնացնել նաև շահուփահարկի գծով կանխավճարների վճարման կարգի և դրույքաչափի փոփոխությունը: Ծգնաժամի պայմաններում կազմակերպությունները հայտնվում են ֆինանսական դժվար կացության մեջ: Նման իրավիճակում նպատակահարմար չի լինի ստիպել կազմակերպություններին շարունակել նախկին ձևով կատարել կանխավճարների գծով իրենց պարտավորությունները: Օրենսդրության փոփոխության արդյունքում շահուփահարկի կանխավճարների մուծման հաճախականությունը և դրույքաչափը նվազեցնելը հնարավորություն կտան ձեռնարկություններին ֆինանսական որոշակի միջոցներ ունենալ իրենց տրամադրության տակ, որոնք կարող են օգտագործվել արտադրության արդիականացման և վերազինման, ինչպես նաև գործունեության ընդլայնման համար: Նման կերպ հարկատուները կարող են հատկապես անկումային տարիներին առավել արդյունավետ տնօրինել իրենց ֆինանսական միջոցները:

8. Ներկայումս, ֆիզիկական անձանց եկամուտների հարկման համակարգը հիմնականում կենտրոնացած է աշխատավարձի հարկման ուղղությամբ:

Բազմաթիվ եկամտի աղբյուրներ, կամ հարկման դաշտում չեն ընդհանրապես կամ նվազեցվում են հարվող եկամտից, թեև ֆիզիկական անձանց եկամուտների մաս են կազմում (ինչպես օրինակ ժառանգությունն ու նվիրատվությունը, ֆինանսական ոլորտի գործառնություններից ձևավորվող եկամուտը, արտասահմանյան դրամական փոխանցումները, չհայտարարագրված ունեցվածքը և այլն): Այսպիսով, ստացվում է, որ ֆիզիկական անձանց եկամուտների հարկումը չի կրում համընդհանուր և համահավասար բնույթ, չի ապահովվում արդյունավետ վերաբաշխում՝ բնակչության եկամուտների համահարթեցման նպատակով, դրանով իսկ անտեսվում է արդարության սկզբունքը:

Հաշվի առնելով երկրի սոցիալ-տնտեսական վիճակը, հարկային համակարգի առանձնահատկությունները և առկա ճգնաժամային երևույթները՝ ֆիզիկական անձանց եկամուտների հարկման համակարգի բարեփոխումները կարող են ուղղված լինել՝

- ֆիզիկական անձանց եկամուտների մի շարք աղբյուրների հարկման միջոցով բյուջեի եկամուտների ավելացմանը,
- ֆիզիկական անձանց եկամուտների ու ծախսերի նկատմամբ արդյունավետ հսկողություն սահմանելուն,
- հարկման գործընթացում արդարության ապահովմանը, բնակչության եկամուտների չափազանց մեծ տարբերակվածությունը նվազեցնելու և հասարակության անապահով մասի օգտին դրանք վերաբաշխելու նպատակով հարկման պրոգրեսիվություն կիրառելուն և հարկային արտոնություններ սահմանելուն:

Նշված նպատակների իրագործման համար անհրաժեշտ կլինի մշակել և ներդնել փոխկապակցված հարկերի համակարգ, որն ընդգրկի ֆիզիկական անձանց բոլոր եկամուտները և ունեցվածքը, իչպես նաև հիմնված լինի կատարված ծախսերի միջոցով ֆիզիկական անձանց եկամուտների չափը բացահայտելուն: Համակարգը կարող է առավել արդյունավետ գործել համընդհանուր պրոգրեսիվ հարկ կիրառելու դեպքում՝ հիմքում դնելով ֆիսկալ և սոցիալական (արդարացի լինելու) տեսանկյուններից դրա արդյունավետությունը:

9. Հարկային բարեփոխումների իրականացման փուլում, ակնհայտորեն, չափազանց մեծ է հարկային վարչարարության դերը: Հայաստանի Հանրապետությունում իրականացվող հարկային բաղաբաղանդությունը՝ իրականացման մեթոդներով վարչարարական և բավականին ծախսատար բնույթ ունի, ինչը, բնականաբար, բացասաբար է անդրադառնում դրա արդյունավետության վրա: Հարկային վարչարարության արդյունավետության բարձրացումը պետք է իրականացվի հարկային մարմիններին վերապահված իրավասությունների հստակեցման և, միաժամանակ, հարկատուների պատասխանատվության բարձրացման գույակցմամբ: Հայաստանի Հանրապետությունում առաջիկա տարիներին իրականացվելիք հարկային վարչարարության բարեփոխումների հիմնական նպատակը պետք է լինի ազգային տնտեսության մրցունակության բարձրացմանը նպաստող, ներդրումների ներգրավմանը խթանող հարկային համակարգի ձևավորումը, որը կապահովի երաշխավորված բյուջետային մուտքեր միջմաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում: Այս առումով, որպես հարկային բարեփոխումների ռազմավարական նպատակներ պետք է հանդիսանան հարկման արդյունավետ մեխանիզմների կիրառման միջոցով բիզնես միջավայրի

բարելավումը, հարկերի վճարումից խուսափելու պատճառների բացահայտումը և վերացումը, -ստվերային տնտեսության դեմ արդյունավետ պայքարը, հարկային օրենսդրության, հարկային ծառայությունների մասնագիտական և տեխնիկական հագեցվածության մակարդակի բարձրացումը:

Ինչ վերաբերում է հարկային վարչարարության բարեփոխումների ցանկալի արդյունքներին, ապա դրանք, մայս և առաջ, պետք է կայանան հետևյալում.

- հանրապետության հարկային համակարգի արդյունավետության, հաշվեկշռվածության և թափանցիկության մակարդակի բարձրացում՝ ապահովելով անհրաժեշտ պայմաններ պետության սահմանադրական գործառույթների իրականացման, քաղաքացիների բավարար կենսամակարդակի երաշխավորման, տնտեսական գործունեության իրականացման համար,
- հարկման ինստիտուցիոնալ միջավայրի կատարելագործում, որը կապահովի բարենպաստ միջավայր ձեռնարկատիրական գործունեության իրականացման, օրենքի առջև բոլոր հարկ վճարողների իրավահավասարության և հարկային պարտավորությունների ամբողջական և ժամանակին իրականացման համար,
- իրավական պետության և քաղաքացիական հասարակության պահանջներին բավարարող սկզբունքների վրա հիմնված հարկային իրավահարաբերությունների ձևավորում:

Հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման միջոցառումները պետք է ուղեկցվեն համապատասխան օրենսդրական փոփոխություններով՝ նպատակ ունենալով առկա խնդիրներին սույլ բազմակողմանի և համակարգված լուծումներ:

Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակվել են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում.

1. Սարգսյան Կ.Ս., Վասիլյան Տ.Գ., «Պետական մակրոտնտեսական կարգավորման առանձնահատկությունները՝ տնտեսական ճգնաժամերի համատեքստում» // «Ֆինանսներ և Լկոնոմիկա» հանդես, Երևան, #4 (154) 2013թ., էջ 20-23

2. Վասիլյան Տ.Գ., «Ֆինանսական գործառնությունների հարկման անհրաժեշտությունը և նպատակը. Ջնյմա Թոբինի առաջարկությունը՝ ճգնաժամի հաղթահարման լծակ» // «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» Հանրապետական գիտաժողովի նյութեր, Գ-իլը 1. Երևան 2013թ., էջ 137-141

3. Վասիլյան Տ.Գ., «Հարկային բեռի կառավարման մեխանիզմների փոփոխությունները ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում. Եվրամիության անդամ երկրներ և Հայաստան»// «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» Հանրապետական գիտաժողովի նյութեր, Գ-իլը 1, Երևան 2013թ., էջ 141-149

4. Վասիլյան Տ.Գ., «ՀՀ Հարկային քաղաքականության հիմնախնդիրների հետճգնաժամային փոլում»// «Ֆինանսներ և Լկոնոմիկա» հանդես, Երևան, #7(157) 2013թ., էջ 24-27

5. Վասիլյան Տ.Գ., «Հարկային համակարգի բարեփոխումները ՀՀ-ում՝ հետճգնաժամային զարգացումների համատեքստում»// «Ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես, Երևան, #7(157) 2013թ., էջ 27-30

**ПУТИ ПОВЫШЕНИЯ ЭФФЕКТИВНОСТИ АНТИКРИЗИСНЫХ
МЕРОПРИЯТИЙ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ (НАЛОГОВЫЙ АСПЕКТ)**

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.03- "Финансы, денежное обращение и кредит".

Защита диссертации состоится 19-го декабря 2013г., в 15³⁰ часов на заседании специализированного совета 014 ВАК РА по экономике при Армянском государственном экономическом университете по адресу: 0025, г. Ереван, ул. М.Налбандяна 128.

РЕЗЮМЕ

Основной целью работы является разработка подходов и предложений реформирования налоговой политики направленных на преодоление последствий экономического кризиса, для достижения которой в работе были поставлены следующие задачи:

- изучение и анализ сущности экономических кризисов, возникновения и эволюции их основных типов, а также характеристик и сфер их воздействия,
- изучение и анализ основных причин недавнего финансового кризиса и характера его влияния на мировую экономику и экономику нашей страны,
- изучение и оценка роли государственного регулирования экономики в условиях рыночных экономических отношений и выявление ее специфики в странах с переходной экономикой ,
- изучение эволюции образования и развития налоговой политики в РА и выявление ее положительных и отрицательных сторон,
- изучение мировой практики налоговой политики в контексте преодоления экономического кризиса и проведение сравнительных анализов между налоговыми системами РА и зарубежных стран,
- выявление и изучение возникших проблем в экономике РА в контексте финансово-экономического кризиса
- разработка комплекса мер по повышению эффективности налоговой политики, которые могут способствовать преодолению отрицательных последствий кризиса.

Объект и предмет исследования. Объектом исследования является экономика Республики Армения, а предметом- проводимая налоговая политика.

Научная новизна диссертации. Основные научные результаты работы, обусловленные решением поставленных в исследовании задач, состоят в следующем:

- На основе анализа глобального финансово-экономического кризиса и посткризисных экономических развитий выявлены проблемы налоговой

системы РА препятствующие экономическому развитию страны, а также представлены некоторые цели, на достижение которых должны быть направлены приоритеты налоговой политики РА.

- На основе налоговой политики РА, а также анализа международного опыта существующего в этой области, выявлены основные направления реформ налоговой системы по отдельным видам налогов в контексте антикризисной экономической политики РА, особенно: установление пониженной ставки НДС для товаров и услуг первой необходимости, понижение налогооблагаемой прибыли на суммы равные средствам вложенным в инвестиции, применение ускоренной амортизации основных средств, увеличение бюджетных доходов при помощи налогообложения различных источников доходов физических лиц.
- В результате исследования существующих проблем налогового администрирования разработаны основные подходы упрощения этой сферы, совершенствования институциональной среды, особенно, уменьшение количества и периодичности отчетов представляемых налоговым органам, упрощение заполняемой информации, разработка конкретных процедур по выявлению организаций уклоняющихся от налогов, расширение полномочий налоговых органов в этой сфере, внедрение отдельных методов налоговых расчетов для малого бизнеса.

**APPROACHES OF INCREASING THE EFFICIENCY OF ANTI-CRISIS MEASURES
IN THE REPUBLIC OF ARMENIA (THE TAXATION ASPECT)**

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the speciality 08.00.03 – “Finance, Cash Flow and credit”.

The defense of the thesis will take place on December 19, 2013 at 15³⁰ o'clock at 014 Council of Economics of SCC RA at Armenian State University of Economics: 128 Nalbandyan street, Yerevan 0025.

ABSTRACT

The main goal of the dissertation is the development of approaches and recommendations concerning the tax policy reforms in order to overcome the impact of economic crises. In order to meet the above stated goal the following objectives are set:

- to study and analyze the nature of the economic crises, the evolution of their occurrence and development, main types, characteristics and areas of their influence;
- to study and analyze the main causes of the recent Global Financial Crisis and the nature of its impact on the global economy and Armenia as well;
- to study and assess the role of the state regulation of the economy in the market-oriented economy and highlight peculiarities of state regulation in the nations with transition economies;
- to study the evolution of the formation and development of the tax policy in Armenia by identifying its positive and negative aspects;
- to study the role of the tax policy in other countries in fighting the negative impact of crises and compare the taxation systems of Armenia and other countries;
- to identify and study the issues of Armenian economy during the Global Financial Crisis;
- to design the complex of measures of improving the tax policy in Armenia within the context of economic anti-crisis policy;

The Object and the Subject of the Study: the object of the study is the economy of the Republic of Armenia, and the subject of the study is the tax policy being implemented.

The Scientific Novelty of the Dissertation Thesis: the main scientific novelties of the dissertation that are linked to meeting the objectives of the research are the following:

- based on the analysis of the recent Global Financial Crisis and the post-crisis economic developments the issues of the taxation system of Armenia were identified and the goals were defined to which the priorities of tax policy of RA should be addressed;
- based on the study of the best practices of tax policy in Armenia and worldwide, reforms on specific taxes related to anti crisis policy in Armenia were presented, particularly defining essential goods and services as VAT exempt (or not fully taxable), decreasing the taxable income with the amount of investments incurred,

using accelerated amortisation model for the depreciation of fixed assets, increasing the budget inflows by including various sources of income of the individuals in the taxable income;

- based on the study of the tax administration issues of Armenia, approaches of increasing its efficiency and improving the institutional aspects of the taxation environment were developed, particularly related to increasing the periods between the reports prepared by the tax payers and decreasing their quantity, simplifying the information included in these reports, arranging specific procedures for identifying entities avoiding taxation by increasing the efficacy of the tax authorities, implementing special methods of tax accounting for small businesses.

A handwritten signature in black ink, appearing to read 'F. Arsenyev', with a stylized flourish extending to the right.